Երուանդ.
Եւ ես կարեմ համախոհից ազգ առնել։
Սլուկ.
Դիպաղեղանց մէջէն ով կայ չահատակ։
Երուազ.
Քան զիս լաւը չես գտաներ լուսնի տակ.
Արգամ.
Թէ այդպէս է, ահա երդնում ի մեր քաջս,
Որ Երուանդայ գահ կարդուրէ այս իմ աջս,
Տիգաւորք իմ կպաշարեն անտառը,
Ամենայն ինչ կպարտակէ մացառը։
Սլուկ.
Թող Երուանդը մինչ արքայի մօտ կենայ,
Որ նորամէն ոչ ոք կասկած չունենայ,
Երբ հասանէ նորան գաղտնի հարուածը,
Նա թող քարշէ նետը, խնու այն խոցը,
Մենք աղաղակ կը ամբառնանք աղմըկեալ,
Եւ նոյն ժամայն կեցցէն կառնու մեր ընտրեալ,
Թէ որսակից իշխաններէն մէկ քանին,
Մեզ հակառակ ձայն արձակեն յանտառին,
Տիգաւոր զօրք յառաջ կուգան արշաւմամբ,
Այն քանիսին կըռեցնեն չար մահուամբ։
(Մէկ Սուրհանդակ ներս մտաւ):
Սուրհանդակ.
Հրաման է ի վեհափառ արքայէ,
Որ գայ Երուանդ որսակցութեամբ ընկերէ։
Երուանդ. (Տայ նմա ոսկի դահեկան):
Ինձ պայծառ է հրաման արքայի,
Ես կհասնիմ նմա ի մուտս անտառի։
Արգամ.
Միայն հրաւէր Երուանդայ է, մեզ չըկայ։
Սուրհանդակ.
Այլ Սուրհանդակ ձեզ ուղարկեց մեծ արքայ։
(Սուրհանդակը գնաց.)
Սլուկ.
Ուրեմն և ինձ գնացած կըլնի Սուրհանդակ։
Արգամ.
Մեզ չէ պիտոյ այժմ առանձին հրաւիրակ։
Երուազ.
Ես ձեր հետ գամ, թէ մըտանեմ առանձին,
Եւ ինձ յարմար տեղ գտանեմ յանտառին։
Երուանդ.
Ուստի գիտենք թէ որ կողմն կընկնի որս։
Արգամ.
Լաւ է երթալ ի միասին անձինք չորս։
Սլուկ.
Արդեօք լաւ չէր նետը դեղել թիւներով։
Երուազ.
Իմ նետերս մինչ միշտ են դեղերով։
Երուանդ.
Բանը այն է որ նետ նորան խոց դընէ,
Այն ես գիտեմ ինչպէս քարշել նետ յանձնէ.
Թէ մնացած լինի կենաց կէս բաժին,
Ես կճմլեմ նորան ի մէջ իմ գրկին։
Թէ նետ նորան չկարենայ սպանել,
Բազուկներս կարեն նպատ հասանել։
Արգամ.
Ահա այս է մեր արքայի չափ խելքին,
Որ քեզ խոցեց և որս կերթայ միասին.
Չի առեր թէ որսորդաց նետ չատ անգամ,
Մահ կը բերէ անակնկալ, տարաժամ։
Սլուկ.
Հին առած է Հայոց մէջը տարածուած,
Թէ երբ այծի լինի մահու օր հասած,
Կը քըքավէ հովւի ձեռի հատ ցըպոյն,
Որ կայծակի պէս կհասնի իւր գլխոյն։
Սանատրուկը Երուանդի սիրտ խոցելով,
Իւր հինք խախտեց անկեան վէմը քանդելով.
Այժմ կուզէ նոր դաւանօք գործ ուղղել,
Լաւ, թէ չընկնի այն գուբ որ ինքն է պեղել։
(Շարունակութիւն ի յետոյ):

# ԱԶԳԱՅԻՆ

## ՀԱՇԻՒ

Մուտք և ծախուց Ս. Էջմիածնի ազգային Ջողովոյ սկսեալ ի 1 Յունվար 1870 մինչև ց31 Դեկտեմբեր 1871 ամ, Պարզեց Ռուբէն:

Մուտք ի 1870:

| | |
|---|---|
| Յունվար 1: Ձկնի հետազօտութեան Նորին Սրբազնութեան Տեառն Մովսիսի Արքեպիսկոպոսի և Գերապատիւ Առաջնորդին մերոյ և կնքելոյ զուգութենէ հաշուոյս Արկեղն, մնացորդ մուտքն թէ առ ձեռն պատրաստ դրամ և թէ ի վերայ մուրհակաց է։ . . . | 6426 3 |
| Փետրվար 25: Յարգոյ Պարոն Յաբէթ Սեղրաքեան ի Բուշեհրայ նուիրեալն ի նպաստ աղքատաց. . . | 250 |
| ,, ,, : Գեր. Պարոնայք Արգար և ընկերաց ի Կալկաթայ առաքեալ 2000 կօ. Ռուփեաց Արկեղն առ նոսա եղելոց՝ տարեկան վաշխն. . . . | 450 |
| Ապրիլ 19: Գերապատիւ Հոգաբարձուաց սուրբ Յովհաննու Եկեղեցւոյն Բթաւիոյ առաքեալ 15000 ջաւա ռուփեաց Արկեղն առ նոսա եղելոց՝ տարեկան վաշխն . . . . . . | 1800 |
| Օգոստոս 25: Ի Գերապատիւ Պարոնայց Արգար և ընկերաց Կալկաթայ ստացեալ զմայր գումար Արկեղն 2000 կօ. ռփեաց, որ է . . . . . . | 4500 |
| Սեպտեմբեր 25: Փոխ տուեալ գումարաց վաշխ ստացեալ. . . . | 19 |
| Նոյեմբեր 2: Գերապատիւ Պարոն Թովմաս Մելքումեան Կալկաթու Նազարեթայ սուրբ Եկեղեցւոյ Եկեղեցպանն առաքեալ ի քանի ամաց հետէ մնացեալ վաշխ. . . . . | 1364 |
| Նոյ. 9 : Ի Բթաւիա ի բարեպաշտ Հայոց հանգանակեալն . . 600 | |
| ի Սմարանգ. ,, ,, 650 | |

ի Սուրբայքս ի Հայոց,, · 200

Նա և ի Գեր. Հոգ. սուրբ Յովհաննու Եկեղեցւոյն Բիթաւիոյ գումարաց վաշխ. · · · 450

ջաւա ռուփիք 1900 որ է 3838

Դեկտեմբերի 12։ Փոխ տուեալ գումարաց վաշխ և այլ գտանելիք ստացեալ. · · · · · · · · · 33 2

Ի 1871 ամ.

Յունուար 20։ Գերապատիւ Պարոնայք Արգար և ընկերաց առաքեալ վաշխ գումարաց. · · · · · 414

,, ,,։ Ի Բուշեռ ի Հայ և յԱնգղ. բարեպաշտաց հանգանակեալ գումարն. 869

Մարտ 6։ Փոխ տուեալ գումարաց վաշխ ստացեալ · · · · · · 15 12

Մարտ 25։ Ի Կալկաթա Արժանապատիւ Տէր Նիկողայոս Տէր Յ. Եղիայեան վիճակաւոր Աւագ Քահանայն հանգանակեալ ի բարեպաշտ Հայոց Հասարակութենէն · · · 1600

Մարտի 28։ Ի Հաշտ Գերապատիւ Աղայ Կարապետ Աւետումն առաքեալ ի Նպաստ աղքատաց · · · · 150

Մայիս 10։ Ի Դաքա Սրբակրօն Տէր Դաւիթ Ս. Նահապետեան վիճակաւոր քահանայն հանգանակեալ ի բարեպաշտ Հայոց հասարակութենէն · 1198 6

Մայիս 10։ Ի Ռանգուն Սրբակրօն Տէր Սարգիս Տէր Մատթէոսեան վիճակաւոր քահանայն հանգանակեալ ի բարեպաշտ Հայոց հասարակութենէ. 276

,, ,,։ Ի Կալկաթա Գերապատիւ Պարոն Թովմաս Մկրտումեան Եկեղեցպանն հանգանակեալ. · · · 287 10

Օգոստոս 3։ Ի Դաքա Սրբակրօն Տ. Դաւիթ Ս. Նահապետեան ի Վասմափայլ Գնիմիէն մահմետականէն ընտացեալ. · · · · · · · · · 2300

,, ,,։ Մի հարիւր բեռ վաճառեալ ալեր շահն եղև. · · · 1415 16

Օգոստոս 3։ Ի Գերապատիւ Պարոնայց Արգար և ընկերաց ստացեալ զմնացորդ մայր գումարն Արկեղ 2000 կօ. ռուփեաց, որ է · · · · · 4400

,, ,,։ Ի Գերապատիւ հոգաբարձուաց սուրբ Յովհաննու Եկեղեցւոյն Բիթաւիոյ ի մայր գումարաց Արկեղն՝ միայն 4500 ջաւառուփի ստացեալ, որ է. · · · · · · · · 9000

Սեպտեմբեր 12։ Ի Բուշեռայ բարձրաստիճան Կօնել Պէլլի Հիւպատոսն Անգղիացւոց տէրութեան առաքեալ ի Նպաստ աղքատաց. · · · · 750

Հոկտեմ. 27։ Ի Բաքու*) Մարդասիրական ընկերութիւնն հանգանակեալ ի բարեպաշտ Հայոց հասարակութենէն 2495 19

Հոկտեմբեր։ 29 Ի Դաքա Սրբակրօն Տէր Դաւիթ Ս. Նահապետեան և հանգանակեալ. · · · · · · · 1162 10

Նոյեմբեր 25։ Ի Բուշեռայ Բարձրաստիճան Կօռնէլ Պէլլի Հիւպատոսն ևս առաքեալ. · · · · · · · · · 1000

Դեկտեմբեր 15։ Ի Բիթաւիա բարեպաշտ այլազգի Քրիստոնեայքն հանգանակեալ և ի ձեռն Գերապատիւ Պարոն Աղանուրի Պ. Աղանուրեան առաքեալ ի Նպաստ աղքատաց. · 1900

Դեկտեմբեր 20։ Ի Կալկաթա Արժանապատիւ Խաչ". Տէր Մարտիրոս Աւագ քահանայ Տէր Յովակիմեան հանգանակեալ ի Գերապատիւ Արք եպիսկոպոսէն Անգղիացւոց Կալկաթայ ևս յայլոց. · · · · · · · · 1680

Գումարն եղև 49594 9

(*) Ի Բագուայ փոխանցմամբ գումարոյն առ աստ զտաւ առաւելութիւն ինչ։

Ծախք է 1870 ամի:

Յունվար 2: Ցայս ամիս 13 տուն աղքատաց հատուցեալ զգումար. որպէս և յանուանէ կան յիշատակեալ ի Մայր հաշիւն, զոր համառօտեմք ի գիւրութիւն ընթերցողաց. . . . . 70

9 հոգի գիւղականաց հացագին հատուցեալ: . . . . . . . . 7

Յուն. 5: Ի Տօնի Ս. Ծննդեան Քրիստոսի ի ձեռն Թաղական քահանայից և գործակցութեամբ միոյն յանդամոց Հոգաբարձութեանս բաժանեցաւ յաղքատս ըստ ներքոյ յատկութեանն.

| | | |
|---|---|---|
| ի Դուրէժ թաղ . | 160 | |
| ի Ղարաղէլ . | 60 | |
| ի Քօչէր . . | 57—10 | |
| ի Չարսուն . . | 70 | |
| ի Ցակորջան. . | 57—10 | |
| ի Մեծ Մէյդան . | 90 | |
| ի Փոքր Մէյդան. | 60 | |
| յԵրևան . . | 56 | |
| | 611 | 611 |

Փետրվար 20: Ցայս ամիս 13 տուն աղքատաց հատուցեալ . . . . 66

Մարտ 29: Ցայս ամիս 5 տուն աղքատաց հատուցեալ . . . . . 22

1 հոգի գիւղականի հացագին 4

Ապրիլ 20: Ցայս ամիս 5 տուն աղքատաց հատուցեալ . . . . . 43

1 հոգի գիւղականի հացագին . 3

Ապրիլ 20: Ի Տօնի սրբոյ Զատկին Թաղական աղքատաց ըստ վերոյ կարգին ծննդեան . . . . . . 611

Մայիս 27: Ցայս ամիս 15 տուն աղքատաց հատուցեալ . . . . . 108

1 հոգի գիւղականի հացագին 3

Յունիս 25: Ցայս ամիս 18 տուն աղքատաց հատուցեալ. . . . 231

Յուլիս 30: Ցայս ամիս 34 տուն աղքատաց հատուցեալ . . . . 244

1 աղքատի թաղման . . . . 15

Օգոստոս: 30 Ցայս ամիս 63 տուն աղքատաց հատուցեալ . . . . 408 10

15 հոգի գիւղականաց հացագին և ճանապարհի ծախս վերադառնալոց 19

" ": Ըստ հրամանի Սրբազան Տեառն Մովսիսի Արքեպիսկոպոսի և Առաջնորդին մերոյ՝ հատուցաք գստերն խելացնոր Ստեփաննոսի Տէր Հայրապետեան. . . . . . . . 30

1 հատ ուրագ և երկու հատ չուան գնեալ վասն գործունեայ աղքատաց. 9

Բժշկի 1800 ռուփեաց փոխանակագրոյ պակասորդն վասն կանուխ գտանելոյ զգումարն. . . . . . 15

Գնեալ 80 բեռ ալիւր, որոյ 60 բեռն եփել տալով ի պէտս աղքատաց, առ բեռն 3 ռուփի վարձ հատուցեալ հացարարին եղև 180 ռուփիք, և այեր պակասորդն 107 - 10 ռուփիք որք են. 289 10

Սեպտեմբեր 18 Ցայս ամիս 39 տուն աղքատաց հատուցեալ. . . . . 268

4 հոգի գիւղականաց հացագին և ճան" ծախս. . . . . . . . 12

Մնացորդ 20 բեռ ալիւրն վաճառեալ, որոյ գնոյ պակասորդն է. . . 40

Կալկաթու 4500 ռուփեաց ներքոյ պակասեցուցեալ վասն կանուխ գտանելոյ զգումարն. . . . . . . 10

Հոկտեմբեր 27 Ցայս ամիս 31 տուն աղքատաց հատուցեալ. . . . 183 5

7 հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . 16 10

2 թաղման . . . . . . . . 19

7 հատ մեծ և փոքր ուրագ և 1 բահ վասն գործունէից. . . . 19

Նոյեմբեր 28: Ի սաստկանալ թանգութեան և ի բազմանալ թիւ աղքատացն, որոց և ըստ կարեաց Արկեղն վճարի գումար, որպէս ի ներքոյ տեսանի.

Ցայս ամիս 128 տուն աղքատաց հատուցեալ. . . . . . . . 553 9

13 Հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . . 31

38 հատ մեծ և փոքր ուրագ և 25 չուան վասն գործունէից. . . . 116 17

2 Թաղման . . . . . . . . 16

Վասն Կալկաթու 136 չուանից կանուխ գտանելոյն պականորդ . . 9

Կուսանաց Անապատի Աղօրին վերանորոգելու վասն աղալոյ ցորեան Արկեղն, որոյ ծախքն է. . . . . 157 14

Դեկտեմբեր 28: Յայս ամիս 188 տուն աղքատաց հատուցեալ. . . 1032 6

75 Հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . 148

23 հատ ալեր փետակ կամ հոր գնելու . . . . . . . . . 10 14

2 Թաղման . . . . . . 13 4

3 հատ մեծ և փոքր ուրագ գնելու վասն գործունէից. . . . . . 20 10

Մի զոյգ գուտ գնելու վասն Արկեղն, զոր և չինելու յնկեղեցւոյ սուրբ Յովհաննու ի Զարսու Թաղ.. .. . 14

Ի 1874 ամի:

Որովհետև առաւելեալ քան զմի հազար Թիւ աղքատացն, ուստի անուանք նոցա միայն ի ցուցակս Թաղական քահանայից յիշատակին, և ի սոյն հաշիւ և եԹ զորոց բովանդակութիւնն գրեմք:

Յունուար 24 Յայս ամիս ուԹն Թաղից Զաքոււ աղքատաց հատուցեալ. 1393

59 Հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . 76 10

Նորակնիք Միրզայ Աբրահամին . 30

1 Թաղման . . . . . . . 6

2 հատ չուան վասն գործունէից . 1 10

Փետրուար 29: Յայս ամիս ուԹն Թաղից աղքատաց հատուցեալ. . . 1274 10

75 Հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . 53

Միրզայ Աբրահամին. . . . . 10

1 Թաղման. . . . . . . . 4

21 հատ բահ և 3 ուրագ վասն գործունէից. . . . . . . . 92

Վասն վերադառնալոյ փոխանակագրոյ պլագգ վաճառականին ի Կալկաթայ, որոյ գումարոյն վաշխ հատուցեալ. 57

Մարտ 24 Յայս ամիս ուԹն Թաղից աղքատաց հատուցեալ. . . 1810 10

121 Հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . 132 10

Միրզայ Աբրահամին . . . . 10

6 հատ բահ և 3 ուրագ վասն գործունէից. . : . . . . . . 38

Դարագիլ Թաղի գուռն վերանորոգելու, որոյ ծախքն է. . . . . 20

Ապրիլ 24: Յայս ամիս ուԹն Թաղից աղքատաց հատուցեալ . . . . 1645 10

128 Հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . 175 10

Միրզայ Աբրահամին. . . . . 30

Վասն Արկեղն 750 լիտր ցորեան աղալոյ վարձ հատուցեալ. . . . 70

58 Հոգի մշակաց վարձ վասն մաքրելոյ գփողոցս Զուղայ ի զբաղմունս գործունէից. . . . . . . . 40 10

1 հատ բահ . . . . . . . . 2

2 Թաղման . . . . . . . . 16

Մայիս 29: Յայս ամիս ուԹն Թաղից աղքատաց հատուցեալ. . . . 3102

361 Հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . 448 10

3 Թաղման . . . . . . . . 22

Յունիս 26: Յայս ամիս ուԹն Թաղից աղքատաց հատուցեալ. . . 1312 10

388 Հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . 542 5

1 Թաղման. . . . . . . . 8

Յուլիս 24: Յայս ամիս ուԹն Թաղից աղքատաց հատուցեալ. . . 905

80 Հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . 126

3 Թաղման . . . . . . . . 21

Օգոստոս 28: Յայս ամիս ուԹն Թաղից աղքատաց հատուցեալ. . . 2228

66 հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . 70

1 ուրագ . . . . . . . . 2

6 թաղման . . . . . . . 33

ի բանդիլ կամ ախմ թուղթ 8 դուզին պահարան և 2 տոմար վասն Արկեղն գնեալ . . . . . . . 20

ՍԵՊՏԵՄԲԵՐ 25: Յայս ամիս ուխտ թաղից աղքատաց հատուցեալ . . 2128

86 հոգի գիւղականաց հացագին և ճանապարհական ծախս. . . . 100

1 թաղման . . . . . . . 6

ՀՈԿՏԵՄԲԵՐ 30: Յայս ամիս ութն թաղից աղքատաց հատուցեալ . . 2527

Թաղական աղքատաց հարկն Տէրութեան հատուցեալ . . . . 90

146 հոգի գիւղականաց հացագին և ճան. ծախս . . . . . . 299 10

3 թաղման . . . . . . . 16

Տէր Մկրտիչ Տիրտերայ քահանային ճան. ծախս . . . . . 20

Ի ձեռն Արժանապատիւ Յակոբ Խաչ. Խաչատուր Վարդապետին վասն Փերիու բնակեալ աղքատաց հատուցեալ . . . . . . . . 1000

Նորոգ շինեալ զկնիք վասն Արկեղն, որոյ ծախքն է . . . . . 11 10

Զմին ի սեննեկաց սուրբ Յովհաննու եկեղեցւոյն վերանորոգեալ որպէս համբար ցորենոյ և ալեր վասն Արկեղն. որոյ ծախքն է . . . . . 117 2

ՆՈՅԵՄԲԵՐ 29: Յայս ամիս ութն թաղից աղքատաց հատուցեալ . 2349 10

139 հոգիք գիւղականաց հացագին և ճան. ծախս . . . . . . . 244 10

Վասն Բժաւիոյ 4500 ջաւատուփեաց կանուխ գտանելոյն պակասորդ 50

1 թաղման . . . . . . . 7

ԴԵԿՏԵՄԲԵՐ 25 Յայս ամիս ութն թաղից աղքատաց հատուցեալ . . 2588

28 հոգիք գիւղականաց հացագին և հանդերձագին . . . . . . 39 10

Նորակնիք Կարապետին . . . 12

Վասն կուսանաց եկեղեցւոյ վերանորոգութեանն հատուցեալ . . . 50

Ի 1869 ամի Դեկտեմբեր ամսոյ՝ յետ վերահասութիւն գործելոյ զհաշւոյս Արկեղն Նորին Սրբազան. Տէր Մովսէս Արք Եպիսկոպոս և Գերապատիւ Առաջնորդն ի նոյն մայր հաշիւ Արկեղն յիշատակեալ է իբաց որոշել զի քանի ամաց մնացեալ անյուսալի 41 հատ մուրհակաց գումարն պարտապանաց Արկեղն, որպէս և մեք աստ ի բաց գրեցաք . . . . . 1422

Ի գումարաց Արկեղն հետղհետէ գտեալ պիտակ արծաթ դրամ . . 44

Մնացորդ համարոյս աջողակ Արկեղն՝ մնայ ի վերայ մուրհակաց (որք ըստ մեծի մասին անյուսալիք). . . . . . 8382 34341 4½

Տուեալ ի գին ցորենոյ 3487 15

Առ ձեռն պատրաստ գումար Արկեղն . . . 4383 92 15253 4½

Գումարն եղև 49594. 9.

Հոգաբարձուք Արկեղ Աղքատաց

Տ. Յարութիւն Տ. Ս. Տ. Յարութիւնեան
Տ. Սեդրեատրոս Յովհաննէսեան.
Տ. Կիւրեղ Թ. Յ. Յովհաննեանց.
Ղազար Գ. Արզումեանց.

Ստորագրութիւնք վկայութեանց 25 անձանց, փոխառաջնորդի, քահանայից եւ Յառաջակարգաց Աստպահանայ:

## Ծանօթութիւն.

Ի սկզբնաւորութենէ 1870 ամի Թանկութեան քաղաքիս Ասպահան՝ ամբողջ թիւ աղքատաց ջուղայ էր յայնժամ իբր 350 հոգիք, որք մինչ գմայիս ամիսն եղեն 744 հոգիք, և հետղհետէ աւելեալ են այժմ 1015 հոգիք ցուցակաւ, որոց շարունակաբար յիւրաքանչիւր եօթնեկի հատուցեալ լինի գումար յԱրկեղէն ի ձեռն թաղական քահանայից, և գործակցութեամբ միոյն յԱնդամոց Հոգաբարձութեանս և ստացեալ լինի վաւերական ստացագիր.

Ի 1871 սեպտեմբեր ամսոյ սկսեալ մերձ 280 հոգիք գործունէայքն ի վեր աղքատաց՝ յատկացեալ գումար ստանան ի ձեռն բարեպաշտական ընկերութեանն Անգղիացւոց և պլոց, որք և աշ-

խառն ի շինութիւնս փողոցաց Ջուղայ, և յայլ ազգային գործս։

Արտաքոյ ցուցակի տնանկացեալ անձանց՝ որոց և արժանն է՝ երբեմնապէս հասուցանի նպաստ ինչ չափաւոր, ոչ յաւել քան զտասն թումանս։

Պանդուխտ գիւղականաց բնակելոց աստ կամ վերադարձելոց հասուցանի հացագին և ծախս ճանապարհին։

Գործունեայ անձանց՝ որք կարեն գործել. տուեալ լինի գործիք այս ինքն բահ, ուրագ և չուան առ ի գործել նոքօք, զի մի՛ իսպառ ձրի զհաց ուտել ուսանիցին։

Ի մասին թաղական աղքատաց հասուցանելի հարկն տէրութեան, միայն յայս ամ հատուցեալ եղև յԱրկեղէն։

Առ տարին ըստ կարողութեան Արկեղն գնեալ լինի ցորեան կամ ալիւր, որ ի ժամանակի սղութեան վաճառի հացարարաց առ ի պատրաստի հաց լինելոյ ի պէտս աղքատաց, և որոյ շահն գրի ի մայր հաշիւ Արկեղն յօգուտ աղքատաց։ ,,

Անցեալ ամսոյ մէջ՝ Ասպահանայ Հայոց "Արկեղն աղքատաց" Հոգաբարձութիւն՝ իւր երկամեայ գործառնութեանց հաշիւը յղել էր առ Վեհ. Հայրապետ մեր, զոր կարեւոր համարեցաք Ամսագրոյս միջոցաւ հաղորդել ի գիտութիւն և ի մխիթարութիւն համազգայնոց մերոց։

Առ աւթիւ քաղցր պարտք կզգամք մեր խորին շնորհակալութեան հաւաստիքը պարզել նոյն բարեսէր Հոգաբարձութեան, որոյ բարենպատակ ջանքերը բազմարդիւն հանդիսացել են մանաւանդ Պարսկաստանի վերջին ցաւալի և դառնակսկիծ անցից ժամանակ, որով բազում մերազնեայ տառապելոց պէսպէս մխիթարութիւններ և նոցա նեղութեանց, վշտաց և բռնանց թեթեւութիւն բաբերարած է, բազմաց կենաց ազատարարք է կանգնած, սովամահէ և յայլ և այլ արկածից կորզելով, միանգամայն մարդկութեան՝ Քրիստոնէութեան և ազգասիրութեան վայել ճգամբք և քրտամբք անդր քան զպարտին կատարած է իւր պաշտօնը և յաւիտենական նախանձելի յիշատակ թողել է Պարսկաստանաբնակ Հայոց բազմաց ներկայից և ապագայից սրտերում։

Կաղաչեմք զԱստուած՝ միշտ զօրացուցանել զնոյն Հոգաբարձութիւն Արկեղն Աղքատաց՝ յարատեւել և ևս արդիւնաւորել յաւէտ ի սոյնպիսի ազգօգուտ ջանս և ի գործս։

## ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ.

Ի 16-ն ամսոյ Վեհ. Հայրապետ մեկնեցաւ ի Հաւլձոյ, և նոյն գիշերը ինչպէս և յաջորդ օրը մնալով ի Մաստարայ, ի 18-ն հասաւ ի Մայր Աթոռս ի Ս. Էջմիածին։

## ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ ՊՕՂՈՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱԼԻՔՍԱՆԵԱՆՑ ՇՈՒՇԵՑԻ, ԵՒ ԿՏԱԿ ՆՈՐԻՆ.

Սիրել զԱզգ՝ բազմաց ցանկալի է, բայց սակաւք կարեն գովելի լինել ի գործս արդիւնաւորելով, մանաւանդ յօգուտ Ազգի միանգամայն Ս. Եկեղեցւոյ։ Անմահ բարերարք են այնպիսիքն, սրտացաւ և հարազատ որդիք են մեր դժբաղդ Հայրենեաց՝ Հայաստանի, զորպիսին ոչ միայն սիրած և պաշտած է մեր Ս. Եկեղեցին՝ զնոյնս ուսուցանելով միշտ իւր որդւոց ի ներկայս և յապագայն, այլ և փառաց և պարծանաց յիշատակարանաց մէջ գովութեամբք արձանագրած է՝ ինչպէս ի